№ 9 ԿԻՐԱԿԻ, 15 ՅՈՒՆՎԱՐԻ

1917
ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ՅՈՒՆՎԱՐԻ № 9

Տարեկան գինը 12 րուբլի. կէս տարվանը 7 րուբլի. ամսական 1 ր. 25 կոպ.։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 7 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են՝ Կովկասում իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ., Կովկասից դուրս՝ 25—15 կոպ.։

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ներկայ 1917 թ. համար

(46-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ.

12 և 11 ամիսը	10 ամիս	9 ամիս	8 ամիս	7 ամիս	6 ամիս	5 ամիս	4 ամիս	3 ամիսը	2 ամիսը	1 ամիսը
12 րուբ.	11 ր.	10 ր.	9 ր.	8 ր.	7 ր.	6 ր.	5 ր.	3 ր. 75 կ.	2 ր. 50 կ.	1 ր. 25 կ.

Արտասահմանի համար (Ամերիկա, Եւրոպա, Հնդկաստան, Պարսկաստան, Հաբէշստան) տարեկան—16 րուբլի, կէս տարին 9 ր., ամսական 2 րուբլի։

Տարեկան բաժնեգինը Ռուսաստանում կարելի է վճարել և մաս-մաս, այն է՝ սկզբից 5 ր., մայիսի 1-ին 4 ր., սեպտեմբ. 1-ին 3 ր.։ Կամ թէ երկու նուագով, այն է՝ սկզբից 7 ր., իսկ մնացորդ 5 րուբլին՝ յուլիսի 1-ին։ Այլ տեսակի մասնավճար չէ ընդունվում։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պէտք է վճարել՝ Կովկասում—առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։ Կովկասից դուրս՝ I երեսի վրա 25 կ., վերջին երեսի վրա 15 կոպէկ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 50 կ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

«Մշակը» յատուկ թղթակիցներ ունի Մոսկվայում, Պետրօգրադում, Պարիզում, Ամերիկայի Ուստր և Նիւ-Եորկ քաղաքներում, Բուխարէստում, Կալկաթայում, Նոր-Ջուղայում, Թէհրանում, Ղազվինում, Թաւրիզում, Անդրկասպեան երկրի զանազան մասերում, Վանում, Էրզրումում, Տրապիզոնում, Երզնկայում և Կովկասի զանազան վայրերում։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, ամսիս 15-ին, Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցվի ս. պատարագ, որից յետոյ տեղի կունենայ հանգուցեալ՝

Շմաւոն Խահանայ Տէր-Բարսեղեանի

արձանի օրհնութիւնը, որի մասին յայտնում են հանգուցեալի որդիները։ Ս. պատարագը կը սկսվի ժամը $10^{1}/_{2}$-ին, իսկ արձանի օրհնութիւնը 12 ժամին։

44 1—1

Սրբուհի Մարտիկովնա Անանեանը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր այն անձերին ու հիմնարկութիւններին, որոնք թէ անձամբ և թէ գրաւոր յարգանք մատուցին իր անմոռանալի ամուսնու՝

Աբգար Ալեքսանդրովիչ ԱՆԱՆԵԱՆԻ

46 մահվան առիթով։ 1—1

Միհրան Ալեքսանդրովիչ Անանեանը իր ամուսնու՝ Մարգարիտ Իվանովնայի և զաւակների հետ միասին յայտնում իր խորին շնորհակալութիւնը բոլոր նրանց, որոնք թէ անձամբ և թէ գրաւոր յարգանք մատուցին, իր անմոռանալի եղբօր՝

Աբգար Ալեքսանդրովիչ Անանեանի

47 մահվան առիթով։ 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
Երկուշաբթի, յունվարի 16-ին
Կը ներկայացնէ
ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ
Դրամա 4 արար. 5 պատկ., ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբը ժամը ճիշդ 8-ին
Տեղերի գները սովորական են
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Երկուշաբթի, յունվարի 23-ին, ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆԻ բենեֆիսին՝
«ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ»—Լերմոնտովի
առ. 42 1—1 Հերթապահ անդամներ՝ Յ. ԶՄՇԿԵԱՆ և Ս. ԳԱԼՍՏԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆ. ԳՈՐԾ.-ԿԱՆ ԸՆԿ.
Նախագահ Ա. ՍԱՀԱԿԵԱՆԻ խմբագրութեամբ և հրատարակութեամբ
„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ"
երկշաբաթաթերթն առաջիկայ 1917 թւականի ընթացքում լոյս կը տեսնի կանոնաւորապէս, երկու շաբաթը մի անգամ, իւրաքանչիւր ամսի 15-ին և 30-ին։
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԸ» կը տայ 1917 թւականի ընթացքում իր տարեկան բաժանորդներին մի քանի գիւղատնտեսական գրքոյկներ և բրօշիւրներ, իբրև պրեմիա։
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ
Պէտք է դիմել՝ Тифлисъ, Контора Армянскаго Сельскохозяйственнаго Общества, для журнала «Гюхатнтесъ»
առ. (հ. կ.) 33 3—2

Մանրածախսի Բաժանմունք
„ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼԵԱՆՆԵՐԻ" Ա./Տ.
(Վանքի բակ, Սիոնի տաճարի մօտից անցնելով Հալաբարի կամուրջին մօտիկ, տելեֆոն № 1—13)
ՍՏԱՑՎԱԾ ԵՆ
Մահուդէ, բրդէ, մետաքսէ և այլ կտորեղէններ
Ռուսական և արտասահմանեան գործարանների
ԲՈԼՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ 5% ԶԵՂՉ
Շաբաթ օրերը մնացորդների վաճառում
Խանութը բաց է մինչև երեկ. ժամը 6-ը։
(ու. կ.) առ. 27 3—3

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ՎԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ.—ոսկուց, պլատինից, արծաթից, ֆարֆորից և այլն։
Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդունելութիւն 10—2 առաւ., 4—6 ժ. երեկ.։
Լերմոնտովսկայա փողոց № 1 մուտքը պէրէուլօկից։
(ա.օ.) 20. առ. 0—9

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Վերադարձել է Կովկասեան Հանքային Ջրերից և վերսկսել է հիւանդների ընդունելութիւնները՝
ԿՈԿՈՐԴԻ, ՔԹԻ և ԱԿԱՆՋԻ հիւ.։
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5—7 ժ.
Бебутовская ул. 26. Երրորդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
առ. (Ե. հ. կ.) 404 100—50

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
երկուշաբթի, յունվարի 16-ին,
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը ներկայացնէ
ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ
Դրամա 4 արար. և 12 պատկ. Լ. Շանթի
Մասնակցում են.—տ. տ. Աբովեան, Տէր-Յակոբեան, [illegible] պ. պ. [illegible], Գալստեան, Դ. [illegible], Յ. [illegible] Թիւնեան Լ., Յարութիւնեան Պ., Յովհաննիսեան Լ., Յ. [illegible] Պ. Գ[illegible]եան, Ռուսեան, Սիակեան, Բաստաջեան և այլք՝
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գները 10 կ. մինչև 54 կ.։
Ռեժիսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
ԷԼԻԶԲԱՐԵԱՆ Ա., ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ա.

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԻՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ—ԹՈՔԱԽՏԻ և ՍՐՏԻ։ Ընդունելութիւնը ՆՈՐ-ՌԷՆՏԳԷՆՕ-ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ կաբինէտում։ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆԸ և ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ X ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ, նոյնպէս ԹՈՔԱԽՏԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ բոլոր ձևերով և էլէկտրականութեամբ։ Վիէննայի ձևի գլխի դուշ, մեծ սոլենոյիդ, դ'ԱՐՍՕՆՎԱԼԻ տօկերի մասնագիտական գործադրութիւնը թոքերի հիւանդութիւններին, սրտին, արտերիոսկլերոզին և նոյնպէս լեարդին, երիկամունքին, արեան պակասութեան, անքնութեան, ՆԵՒՐԱԼԳԻԱՅԻՆ, ողնաշարի հիւանդութիւններին, աստմային, գեմորոյին, պօդագրային ոսկրացաւին։ Ամէն օր 9—1 ժամը և 5—7 ժ. երեկ. Բէբուտովսկայա № 23
934 հեռ. 7—92. 100—57

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

— о —

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Р. С.» բացասաբար է վերաբերվում դէպի Վիլսոնի յայտարարութիւնը և կարծում է, թէ Բոսֆորը և Դարդանէլը չէզոք դարձնելով Ռուսաստանը ազատ մուտք դէպի ծովը չէ կարող ունենալ։

◆ «Р. В.» ասում է, թէ Վիլսոնի գերմանասիրութիւնը չքանում է նրա յայտագրից յետոյ։ Ըստ էութեան Վիլսոնը այն է ասում, ինչ ասել են Ասկվիտը և Գրէյը։

◆ Միլիւկովը ասում է, թէ Վիլսոնի յայտարարութեան բոլոր կէտերի հետ կարելի է համաձայնել, բացի այն կէտից, թէ հաշտութիւնը չը պէտք է կնքվի յաղթողների և յաղթվողների մէջ։ Դա հակասում է համաձայնութեան պետութիւնների հիմնական նպատակին—վարել պատերազմը մինչև յաղթական վախճանը, երբ յաղթող կը լինեն համաձայնութեան պետութիւնները։ Վիլսոնի ճառի մէջ ցուցմունքներ կան, որոնք հնարաւորութիւն կը տան հաշտութեան կոնֆերենցիային վերջ դնել Աւստրիային և Թիւրքիային, որովհետև նրանք պատկանում են այնպիսի պետութիւնների շարքին, որոնց մէջ ուրիշ ժողովուրդներ ճնշվում են։

ՖԵԼԻԵՏՕՆ

ՊՈՉԵՐ

(Ըստ նորագոյն գիտական հետազօտութիւնների)
(Արտատպելը, առանց հեղինակի թոյլտուութեան, արգելվում է)

Հիմա քաղաքների քաղաքաւորութիւնը կամ անքաղաքութիւնը չափվում է պոչերով։ Որքան մի քաղաք քաղաքաւոր է, այնքան նա քիչ և կարճ պոչ ունի, և ընդհակառակը՝ որքան նա անքաղաք է, այնքան նրա պոչերը շատ են և երկար։

Համեմատական պոչային վիճակագրութիւնը հաստատել է, որ այդ կողմից Թիֆլիսը Ռուսաստանի ամենաքաղաքաւոր քաղաքներիցն է։

Դիմենք թւերին։ Միջին հաշւով ամեն օր Թիֆլիսն ունի ընդամենը . 165 պոչեր

Պետրօգրադը	1492	»
Մոսկվան	1498	»
Օդեսան	1312	»
Կիևը	1310	»
Խարկովը	1286	»
Ռոստովը	1272	»

Բայց, ինչպէս ասացինք, քաղաքների քաղաքաւորութիւնը միայն պոչերի թւով չէ չափվում, այլ պոչերի... կարճութեամբ. երկար պոչը ապացոյց է քաղաքի անկարգութեան, կարճ պոչը, ընդհակառակը, բնորոշում է բարեկարգ քաղաքին։

Դիմենք դարձեալ գիտական հետազօտութեանը։

Պետրօգրադում ամենից առաջնակարգ պոչի երկարութիւնը հասնում է 865 արշինի

Մոսկվայում	812	»
Օդեսայում	519	»
Կիևում	462	»
Խարկովում	422	»
Ռոստովում	263	»
Թիֆլիսում	112	»

Պարզ է, որ Թիֆլիսը այդ հաշւով Ռուսաստանի ամենից կարճապոչ կամ պոչակարճ քաղաքն է։

Ահագին նշանակութիւն ունի պոչի ինչ նիւթից լինելը, այսինքն թէ նա հացի՞ թէ բուլկի՞, նաւթի՞ թէ, պիրօժնիի՞ սապնի՞ թէ մսի պոչ է։

Այդ կողմից ևս նորագոյն հետազօտութիւնները անհերքելի կերպով ապացուցել են, որ Թիֆլիսը քաղաքաւոր քաղաքների թւումն է։

Մեզնում, օրինակ, ամենաերկար պոչ եղել է հացայինը, որը 1916 թ. դեկտ. 3-ին հասել է իր մաքսիմումին, այն է 112 արշինի։

Պետրօգրադում այդ առաջնութիւնը պատկանել է շաքարին. շաքարային պոչը այդտեղ նոյեմբերի 3-ին հասել է 851 արշինի, Մոսկվայում 811 արշինի, Կիեվում 808 արշինի, ուստի այդ պոչը ամենայն իրաւամբ համարվում է քաղցր պոչ, դուրեկան պոչ կամ կանացի պոչ։ Պոչերի ընդհանուր երկարութիւնը ահագին դեր է կատարում քաղաքների բարեկեցութիւնը չափելու համար. որքան պոչերի ընդհանուր երկարութիւնը մեծ է, այնքան թշուառ է քաղաքը։

Պրոֆեսոր Էրհարդ ֆոն Բլիւմէնտալը (դարձեալ իսկական ռուս) հաշւել է, որ միմիայն դեկտ. ամսում Պետրօգրադի բոլոր պոչերը ունեցել են 1936 վերստ երկարութ.

Մոսկվան	»	1904	»	»
Օդեսսան	»	1322	»	»
Կիևը	»	1134	»	»
Խարկովը	»	941	»	»
Ռոստովը	»	820	»	»
Թիֆլիսը	»	694	» (?!)	»

Այնպէս որ, ըստ մի այլ հետազօտողի (դարձեալ իսկական ռուս), պրոֆ. Էմմէրիխ ֆոն Լէմների, Պետրօգրադի մարդկային պոչերը, անկախ նրանց քաղաքաւորութիւնից, 3—4 անգամ երկար են եղել, քան Պետրօգրադի բոլոր շների պոչերը, և 6—7 անգամ երկար, քան բոլոր ձիերի պոչերը։

Թիֆլիսի մարդկային և շնային պոչերի երկարութիւնը, աւաղ, դեռ ևս լուրջ գիտական հետազօտութեանց չէ ենթարկվել, և միայն նորերս պոչատանջ և պոչատենչ ձայնաւորներից մէկը մի առաջարկ է պատրաստում, որի էութիւնը կայանում է հետևեալում. կազմել դումայի բոլոր ֆրակցիաների ձայնաւորներից յատուկ կոմիտէտ, այսպէս ասած՝ միջկուսակցական «պոչային կոմիտէտ», որին յանձնել ամենալուրջ կերպով ուսումնասիրել Թիֆլիսի բոլոր պոչերը՝ դնելով նրանց օբեկտիվ և անաչառ համեմատութեան հետ Թիֆլիսում գտնվող պոչաւոր բոլոր կենդանիների հետ. այդ նպատակով յիշեալ ձայնաւորը դումայից ուզում է 16,300 ր. գումար՝ անհրաժեշտ համարվող պոչախոյզ մասնագէտների շտաբ հրաւիրելու համար (ծառայողների ցուցակագրութիւնը սկսված է, ամսական կը ստանան 250—500 ր. ռոճիկ)։

Ոչ պակաս արժէքաւոր են այն թւերը, որոնք ցոյց են տալիս, թէ պոչերը քանի՞ մարդկանցից է կազմված։

Ստատիստիկայի յայտնի մասնագէտ պրոֆեսոր Իվ. Իվ. Իվանով հաշւել է, որ միայն մեծ քաղաքներում օրական պոչ բռնելու գործով զբաղված են.

Պետրօգրադում	66,740	հոգի
Մոսկվայում	54,391	»
Կիեվում	38,406	»
Օդեսայում	29,634	»
Խարկովում	28,111	հոգի
Ռոստովում	23,104	»
Թիֆլիսում մօտաւորապէս	11,300	»

Բանասէրների համար Ռուսաստանի ներկայ պոչային դրութիւնը թողել է իր հետքը նաև գեղեցիկ գրականութեան մէջ. այսպէս, օրինակ, այժմ խոհարարներն ու խոհարարուհիները սիրային տեսակցութիւն են նշանակում իրար ոչ թէ խոհանոցի ծխոտ և ճենճոտ մթնոլորտում, ինչպէս այդ նախապոչային շրջանումն էր, այլ բաց երկնքի տակ՝ փողոցներում պոչեր բռնելիս։

Պատահմամբ իմ ձեռքն ընկաւ մի այսպիսի նամակ.

«Անմոռաց Սօնիչկա,

«Վաղը ես պոչ եմ բռնելու քաղաքային № 8 խանութի մօտ սկսած առաւօտեան ժամը 9 ից. արի, սիրելիս, այնտեղ, և մենք բաւական ժամանակ կունենանք շարունակելու մեր անցեալ օրվայ խօսակցութիւնը»։ Ստորագրված էր՝ «Քո Սերօժա»։

Պարզ էր, որ գրողը ինտելիգէնտ լովելաս էր։

Նորերս, անցնելով փողոցից, ես լսեցի մի այսպիսի պոչային բանաստեղծութիւն հայերէն լեզուով, որի մէջ հարազատութեամբ պահպանված էր ժողովրդական ոգին, շեշտը, արտայայտութիւնների ազգային թափը։ Ահա մի նմուշ.

Վշտահար Անուշաւան Ղազանջեանը յայտնում է իր ազգականներին և բարեկամներին իր սիրելի և անմոռանալի ամուսնու'

ՇՈՒՇԱՆԻԿ ՂԱԶԱՆՋԵԱՆԻ

վաղաժամ մահվան մասին: Ամբիծքը կը կատարվի ամեն օր երեկոյեան ժամը 7-ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում:
Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին: 51. 1—1

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂԱԶԱՆՋԵԱՆԸ յայտնում է իր ազգականներին և բարեկամներին իր անմոռանալի հարս'

Շուշանիկ Ղազանջեանի

վաղահաս մահվան մասին: Ամբիծքը ամեն օր, երեկոյեան ժամը 7 ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում: Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին:
52 1—1

ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԵՐԱՆՈՒՀԻ, ԱՆԱՀԻՏ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱԿՈԲ ԱՓՈՅԵԱՆՆԵՐԸ յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին առաջին երկուսը իրանց սիրելի և անմոռանալի դստեր, իսկ վերջին երեքը իրանց սիրելի քրոջ'

ՇՈՒՇԱՆԻԿ ՂԱԶԱՆՋԵԱՆԻ

վաղահաս մահվան մասին: Ամբիծքը կը կատարվի ամեն օր, երեկոյեան ժ. 7 ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում: Թաղման մասին կը յայտարարվի առանձին:
50 1—1

ԳԱՍՊԱՐ ԵՒ ԵՐԱՆՈՒՀԻ ԵԳՈՐԵԱՆՆԵՐԸ յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին, առաջինը իր սիրելի և անմոռանալի քրոջ, երկրորդը իր տալոջ,

Շուշանիկ Ղազանջեանի

վաղահաս մահվան մասին: Ամբիծքը ամեն օր, երեկոյեան ժամը 7 ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում: Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին:
49 1—1

ՆՈՐ ՀՈՅԱԿԱՊ ՑԻՐԿ Եղբ. Եֆիմովների

(Միխայլեան պրօսպեկտ, տելեֆօն 19—00)

Այսօր, կիրակի, յունվարի 15-ին, Էկսպրօ-օպերետ երկու ներկայացում ցերեկը և երեկոյեան մասնակցութեամբ արտասահմանեան արտիստների: Բովանդակալից ծրագիր: Այսօր տեղի կունենայ առաջին դասարանի անգլիական [illegible] ՎԱՐԻՆԳԶՕՆՆԵՐԻ, որոնք անուանվում են «[illegible]»: Հանճարեղ մանկահաս [illegible] դասարբօներ [illegible]: Ամբողջ [illegible] մասը հիացմունքով է խօսում այդ երևոյթի մասին: Նյութը կը մասնակցեն նաև միւս [illegible] դասարան [illegible]:
Ցերեկվայ ներկայացման սկիզբը ժամը 1-ին: 48. 1—1

◆ Հաստատ աղբիւրից հաղորդում են որ մօտ օրերս կը հրատարակվի Լեհաստանի մասին ակտը: Ցայտնում են, որ կառավարութիւնը կանգ է առել Ս. Դ. Սազօնովի նախագծի վրա:

Միաժամանակ հրատարակվելու է մի ակտ' հրէաների մասին, որ վերաբերելու է բնակութեան վայրերը սահմանափակելու վերացմանը և ակցիոներական ընկերութիւններում հրէաներին արտօնութիւններ տալուն:

◆ Մոսկվայում, Միլիւկովի մասնակցութեամբ կայացաւ կադետական կուսակցութեան կօմիտէտի նիստը: Քննվել է քաղաքական դրութիւնը:

◆ Պարիզից հաղորդում են, որ Վարշավա է եկել բուլղարական թագաւոր Ֆերդինանդի ազգական Ադամ Զարտօրիսկի: Հարց է յարուցվել նրան ռեգենտ նշանակելու:

◆ Կեօլնում ժողովրդական մեծ յուզմունքներ են: Երեք օր է կայարանը փակ է: Արգելված է քաղաքից դուրս գնալ նոյն իսկ նրանց, ովքեր ունեն թոյլտւութիւն:

◆ Շւէյցարական զօրքի գլխաւոր հրամանատար գեներալ Վիլլէն յայտնել է, որ շւէյցարական զօրքն արդէն կազմ ու պատրաստ է' արժանի դիմադրութիւն ցոյց տալու թշնամուն:

◆ Ջուբինսկին ասում է. «Վիլսոնի յայտարարութիւնը քաղաքական խոշոր ակտ է: Նրան պէտք է անպայման միանան կռւող պետութիւնները»:

◆ Դիւանագիտական շրջաններում մեծ նշանակութիւն են տալիս Միացեալ Պետութիւնների և Գերմանիայի միջև ծագած նոր միջադէպին, որը առաջ է եկել այն պատճառով, որ գերմանական իշխանութիւնները չէզոք միսիաների հետ միասին Բուխարեստից արտաքսել են և ամերիկական միսիային: Վաշինգտօնի կառավարութիւնը այդ առիթով խիստ բողոքագիր է պատրաստում:

◆ Վարշավայում լոյս տեսնող լեհական թերթերը լեհական մինիստրներ անուանում են հետևեալ անձանց. ներքին գործերի մինիստր' Եազնիցկի, արտաքին գործերի' կոմս Ռաստվորովսկի, ֆինանսների' Ջերժբիցկի, արդարադատութեան' Բուկովեցկի. մինիստրական թեկնածուներ ժողովրդական լուսաւորութեան, ծովային և զինւորական մինիստրութիւնների համար թերթերը տալիս են Գրուշիցկիի, Լիմպիցկիի և Պիլսուդսկիի անունները:

* * *

Մարալ, դուրս եկ, դուրս եկ շուտով ուլիցը,
Լուս կը շողայ քու էգ անուշ խալիցը:
Ես պոչ կայնեմ, բռնեմ քու հաստ կուռիցը,
Որ չը փախչես, կայնես իմ աջ կողիցը:

Մի ուրիշը, աւելի հարազատը, թիւրքահայկական ուրոյն ոճով.

Եար ջան, բռնել եմ ես պոչը,
Դու ինձ խամար մաքի էղիր, ես' պոչը,
Էրնէկ կը տանըլմէն քու էս տիրոջը,
Արի, եար ջան, բռնի ինձ խետ էս պոչը:

Մեզ թւում է որ, երևի կը գտնվեն հայ բանաստեղծներ, որոնք լուրջ կերպով կը զբաղվեն մեր նորաբոյս ժողովրդական պոչային բանաստեղծութեան գործով և հարուստ նիւթ կը ժողովեն հայ բանահիւսութեան համար, որով մի փայլուն էջ կաւելացնեն «Поэзія Арменіи» II հրատարակութեան համար:

Գիտութեան համար շատ և շատ կարևոր էր պարզել նաև, թէ պոչ բռնողները օրական քանի ժամ են գործ գնում այդ վերին աստիճան զուարճալի պարապմունքի վրա:

Եւ ահա յայտնի էկօնօմիստ պրոֆեսոր Այէնբուրգէր (դարձեալ իսկական ռուս) հաշւել է, որ օրական Պետրօգրադում այդ զուարճալի ժամանցի վրա կորչում է

Մոսկվայում	1,538,400 ժամ
Պետրօգրադում	1,823,613 »
Օդեսայում	1 160 041 »
Կիեվում	1,045,035 »

Թիֆլիսը, դժբաղդաբար, դեռ ևս չունի պոչաժամային կամ ժամապոչային այդ հաշիւը:

Հոչակաւոր զինւորական տեխնիկ ֆօն Դարմէյէր (մի այլ իսկական ռուս) հաշւել է, որ եթէ պոչեր կազմող այդ մարդիկ, փոխանակ այդ ժամանցի, պատերազմի համար ռազմամթերք պատրաստելով զբաղվէին, մեր քաջարի զօրքը կը ստանար օրական

Վառօդ . . .	48,360 պուդ
Թնդանօթային ռումբեր	196 570 հատ
Հրացանի փամփուշտներ	8.492,000 »
Ձեռքի ռումբեր . .	2.316,194 »
Թնդանօթներ . .	490 »
Հրացաններ . .	18,800 »

Կամ, ուրիշ խօսքով, մենք միմիայն պոչերի վրա գործ դրած ժամանակով թշնամուն յաղթած կը լինէինք դեռ ևս անցեալ տարի նոյեմբերին. իսկ եթէ պոչ պահողներն զբաղվէին երկաթուղի շինելով, մենք կունենայինք ամեն օր 412 վերստ երկարութիւն ունեցող երկաթուղային գիծ:

Բայց, ըստ երևոյթին, ոչ ոք չէ ուզում զրկել ռուս քաղաքացիներին պոչեր բռնելու ազնիւ, կրթիչ և զուարճալի ժամանցից:

Սալ-Ման

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

12—13 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կոմից.

Կովկասեան զօրաճակատի վրա ձիւնախառն մրրիկ է:

Մեր սուզանաւերից մէկը Բօսֆորի մօտ ջրասուզեց 4 նաւակ և 3 նաւակի էլ ստիպեց ափ նետել, ուր և նրանք ջարդվեցին:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կոմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

12—13 յունվարի

ՀԱՒՐ.—Հաղորդագրութիւն Մերձաւոր-Արեւելքում կատարվող գործողութիւնների մասին.

Բալկանեան զօրաճակատի մի քանի տեղերում եկել է առատ ձիւն: Թնդանօթաձգութիւնը շարունակվեց չափազանց յաճախ կերպով, մանաւանդ այն մասում, որ գրաւել են իտալացիք Գեվգելի շրջանում: Ռուս զօրքերի գործողութիւնները տեղի էին ունենում Սառավինի շրջանում, որի շնորհիւ վերցվեցին գերիներ: Թիւրքական մի զօրախումբ պարտութիւն կրեց Կակարեսկի մօտ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կոմից.

Ոչինչ էական բան տեղի չունեցաւ ռումինական զօրաճակատի վրա:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

12—13 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կոմից.

Տիրուլ ճահճի և Աա գետի միջև հակառակորդի յաճախ յարձակումները սկզբում ետ էին մղվում մեր կրակից, բայց յետոյ մեր քաջարի գնդերից մէկի շեշտակի հակայարձակումով թշնամին ետ մղվեց Տիրուլ ճահճի արևելեան մայրի մօտ գտնվող բլրակներից և նահանջեց դէպի հարաւ: Աա գետից արևելք մեր զօրամասերն առաջացան Կալնցէմ գիւղի ուղղութեամբ: Գերմանացիք, ռմբակոծելով յարձակվողներին ուժեղ թնդանօթային կրակով, գործեցին հակայարձակում և ետ մղեցին մեր զօրամասերին $^1/_2$—1 վերստ դէպի հիւսիս. յաճախ կռիւները շարունակվեցին մօտ 14 ժամ:

Մեր թնդանօթային կրակից ընկաւ թշնամու մի աէրօպլան, որ իջաւ մեր զօրաշիրքերի մօտ (Բրօդից արևմուտք). ընկնելիս աէրօպլանն այրվեց, օդագնացը և օգնականը գերվեցին: Աէրօպլանի մէջ կար 2 գնդացիր:

ԼՕՆԴՕՆ.—Պաշտ. հաղորդագրութիւն.

Յունվարի 11-ին երկուստեք տեղի ունեցաւ օդային սաստիկ գործունէութիւն: Օդային կռիւների ժամանակ ընկաւ մեր աէրօպլաններից մէկը: Գերմանական 6 աէրօպլան ոչնչացան և 3-ը ստիպված էին իջնել, ստանալով լուրջ վնասուածքներ: Մեր աէրօպլաններից պակասում են 2-ը:

ՊԱՐԻԶ.—Պաշտ. հաղորդագրութիւն.

Պորուչիկ Գիւիմէր իջեցրեց թւով 27-րդ թշնամու աէրօպլանը, որ ընկաւ Մօրէպի մօտ: Վէրդէօնի մօտ ընկան թշնամու երկու աէրօպլան: Յունվարի 9-ին 16 անգլիական օդագնացներ ռմբակոծեցին Բիւրբախի հանքային գործարանները, պատճառելով խոշոր վնասներ: Մեր օդագնացներից մինը ռմբակոծեց Դէն կայարանը, որի հիւսիսային մասը վնասվեց: Լէյտենանտ Գէրտօն իջեցրեց թշնամու' թւով 17-րդ' աէրօպլանը, որը ջարդվեց ընկնելիս:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կոմից.

Տիրուլ ճահճի և Աա գետի միջև (Ռիգայից արևմուտք) մեր զօրամասերը, առաջանալով, վանեցին հակառակորդին, վերցրին գերիներ և 2 գնդացիր, բայց յետոյ գերմանացիների ճնշման ներքոյ ետ եկան իրանց նախկին դիրքերը: Աա գետի արևելեան ափում մեր զօրամասերը, մղելով յաճախ կռիւ, առաջացան $1^1/_2$ վերստ Կալնցէմ գիւղի ուղղութեամբ, բայց յետոյ հակառակորդի հակայարձակումներից ստիպված էին ետ գալ իրանց նախկին դիրքերը: Գեներալ Մէլշիկէվիչը, վիրաւորվելով կռւի մէջ, մնաց զօրքերի մէջ:

Բերէզինա գետի ակունքի շրջանում մեր հետախոյզները գերեցին 23 գերմանացի:

Թշնամու աէրօպլանները նետեցին Ռաձիվիլօվ կայարանի վրա ռումբեր, որոնք վնասներ չը պատճառեցին:

ԼՕՆԴՕՆ.—Պաշտ. հաղորդագրութիւն.

Յունվարի 12-ի կէսօրին Գիւլուկի մօտ մենք գործեցինք աջող արշաւանք, թշնամու խրամատների ուղղութեամբ. ոչնչացնելով մեծ թւով գերմանացիներ, մենք կորցրինք ընդամէնը 5 վիրաւոր:

Ֆօկիսարից արևելք մենք վանեցինք թշնամու 2 զօրաբաժին, որոնք կամենում էին յարձակում գործել մեր զօրագծերի վրա: Այսօր վաղ առաւօտեան թշնամու երրորդ զօրաբաժնին, շնորհիւ շատ կատաղի ռմբակոծութեան, աջողվեց հասնել մեր խրամատներին' Իպրից արևելք, բայց թշնամին իսկոյն ետ մղվեց և մենք վերականգնեցինք մեր դրութիւնը: Ցերեկով գերմանական արտիլերեան եռանդով գործում էր Իպրի շրջանում. մենք աջողութեամբ պատասխանում էինք: Նէվիլ-Սէն-Վաստից արևելք մենք աջողութեամբ ռմբակոծեցինք թշնամու խրամատները:

Օրվայ ընթացքում տեղի էր ունենում օդային խոշոր գործունէութիւն' երկու կողմից: Մեր կրակը իջեցրեց գերմանական մի աէրօպլան: Օդային կռիւների ժամանակ մենք ոչնչացրինք գերմանական 4 աէրօպլան և 3-ին ստիպեցինք իջնել: Մեր աէրօպլաններից պակասում են 3-ը:

ՊԱՐԻԶ.—Պաշտ. հաղորդագրութիւն.

Մեր արտիլերեան կործանարար կրակով ռմբակոծեց գերմանական հրետանները Իպրի, Լիւնէվիլի և Նարժան-Վէյլէրկօպֆի շրջանում. բաւականին տաք թնդանօթաձգութիւն տեղի էր ունենում Վերին Էլզասում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

12—13 յունվարի

ԽԵՐՍՕՆ.—Տեղական լրագիրներում տպված է փոխնահանգապետի դիմումը ազգաբնակութեանը, որի մէջ ասված է. «Խերսօնը պէտք է հիւրընկալէ քաջարի դաշնակիցներին, ուստի առաջարկում եմ ազգաբնակութեանը պատրաստել անհրաժեշտ թւով բնակարաններ: Եթէ յօժարակամ առաջարկութիւններ չը լինեն, շինութիւնները կը գրաւվեն»:

ՂԱԶՎԻՆ.—Յունվարի 10-ին եկաւ Կովկասի Փոխարքայի օգնական գեներալ Եանուշկէվիչը, որին դիմաւորեցին գեներալ Բարատովը իր շտաբով, ռուսաց հիւպատոսը, պարսից իշխանութիւնների, տեղական իշխանների և ազգաբնակութեան պատգամաւորութիւնները: Պատգամաւորութիւնները ուրախութիւն յայտնեցին, որ ռուս զօրքերի գալստեամբ Պարսկաստանում երկար տարիներ տիրող անիշխանութիւնը վերացաւ: Երեկոյեան ռուսաց հիւպատոսի մօտ կայացաւ ճաշ: Հետևեալ օրը գեներալ Եանուշկէվիչը դիտեց Ղազվինում գտնվող զօրքերին և մեկնեց Համադանի զօրաճակատը:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հեռագրում են. «Պաշտօնապէս յայտարարված է, թէ թշնամի պետութիւնների հպատակները, որոնք գտնվում են Գերմանիայում, պարտաւոր են կատարել որոշ աշխատանքներ: Հրաժարվողները կենթարկվեն բանտի մինչև մի տարի ժամանակով»:

Վիէննայից հաղորդում են, թէ զինւորութեան են կանչված 17 տարեկան պատանիները:

ԼՕՆԴՕՆ.—Գերմանացի նաւաստիների ասելով, վերջին ծովային ճակատամարտի ժամանակ ընկղմվել են եօթ գերմանական ռազմանաւ:

ՍՕԼՈՒՆ.—Ծովապաշարման պատճառով պահեստներում պաշարները սպառվում են: Զգացվում է հացի և քարածուխի պակասութիւն:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Յունվ. 11-ին ռումինական գահաժառանգին ներկայացաւ և մատուցեց արծաթէ սկուտեղի վրա աղ ու հաց քաղաքային ինքնավարութեան պատգամաւորութիւնը, յոյս յայտնելով, թէ պրինցը անձամբ հնարաւորութիւն կունենայ համոզվելու, որ մայրաքաղաքը և ամբողջ Ռուսաստանը հաւատում են արդար գործի յաղթանակին, որի համար Ռումինիան կռւում է դաշնակիցների հետ միասին:

Ռումինական պրինցը ընդունեց արտաքին գործերի մինիստր Պօկրովսկիին:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Աւստրիական լրագիրները գտնում են, որ Վիլսօնը կանգնած է համաձայնութեան պետութիւնների տեսակէտի վրա, ձգտելով Գերմանիայի քայքայման, Թիւրքիայի ոչնչացման և Աւստրո-Ունգարիայի կազմալուծման:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Ռեյխստագ: Բիւջէի մասին վիճաբանութիւնները տևեցին մինչև գիշերվայ ժ. 3-ը և կրում էին շատ աղմկալի բնոյթ, որովհետև լիբերալները և սոցիալիստները խիստ քննադատութեան ենթարկեցին կառավարութեան, մանաւանդ մինիստր-նախագահի գործողութիւնները: Վերջինս ասաց. «Ես և իմ կօլէգները կամենում ենք աշխատել ռեյխստագի հետ միասին և առաջարկում եմ նրան մասնակցել ներկայ ծանր ու վտանգաւոր ժամանակ մեր առաջ ծառացած բարդ հարցերի լուծմանը»: Սակայն այդ դիմումն էլ չը գործեց տպաւորութիւն ձախակողմեան կուսակցութիւնների վրա: Վիճաբանութիւնները դադարեցին: Բիւջէի նախագիծը յանձնվեց մասնաժողովի: Վերին պալատում բիւջէտային վիճաբանութիւնները անգոյն էին և վերջացան 3 ժամվայ ընթացքում:

ԿԻԵՎ.—Եկողների ասելով գերմանական օդագնացները թռիչքներ են կատարում Լուցկի վրա:

ԼՕՆԴՕՆ.—Աշխատանքի ներկայացուցիչների կօնգրէսին Մանչէստէրում աշխատաւոր կուսակցութեան լիդէր Գենդէրսօն ստացաւ 1,542,000 ձայն 1916 թւին ստացած ձայներից 137,000 ձայնով աւելի: Չը նայած մի քանի պասիֆիստների բողոքներին, հռետորների մեծամասնութիւնը և բոլոր բանաձևերը խօսեցին յօգուտ պատերազմը մինչև կատարեալ յաղթութիւն շարունակելու:

ԺՆԵՒ.—Գերմանական կառավարութիւնը այս օրերս ընդհանուր արգելք դրեց Շվէյցարիայից Գերմանիա ապրանքներ ներմուծելու վրա: Այդ միջոցը Շվէյցարիայում առաջ բերեց դժգոհութիւն, մանաւանդ որ Գերմանիա ապրանքներ արտահանող շվէյցարական հաստատութիւնները կանխապէս տեղեակ չէին այդ մասին:

ՀՌՕՄ.—Զէնքի կանչվեցին 1875 և 1874 թ.թ. զինւորակոչներին ենթարկված անձինք: Սկսած 1881 թւից զինւորական ծառայութիւն կրողները պէտք է անպայման գործուղվեն ռազմական գործողութիւնների սահմաններում:

ՏՕԿԻՕ.—Արտաքին գործերի մինիստր դէր-կոմս Մօտօնօն պարլամենտում արտասանած ընդարձակ ճառի մէջ ասաց,—Եապօնիան հանդէս եկաւ ներկայ պատերազմի մէջ Անգլիայի առաջին իսկ կոչին և իսկոյն օգնութեան եկաւ դաշնակիցներին: Հարկաւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհն ըստ արժանւոյն կը գնահատէ Եապօնիայի մատուցած ծառայութիւնները, վասնզի Եապօնիան մասնակցեց այս հսկայական պատերազմին, ոչ միայն իր սեփական շահերը պաշտպանելուց դրդված, այլ և ամբողջ մարդկութեան և դաշնակիցների շահերի պաշտպանութեան համար: Եթէ դաշնակիցների յաղթութիւնը կատարեալ չը լինի, խաղաղութիւնը Հեռաւոր Արևելքում, որի համար Եապօնիան այնքան զոհաբերութիւններ է արել, լուրջ վտանգի կենթարկվի: Եապօնիան, ընդհանուր թշնամու դէմ կռւելով, միացաւ 1914 թ. սեպտ. 5-ի Լօնդօնեան դեկլարացիային և Պարիզի տնտեսական կօնֆերէնցիային:

Ապա Մօտօնօն ասաց, թէ Եապօնիան միացաւ ամերիկեան հաշտութեան առաջարկութեանը ուղարկված դաշնակիցների պատասխանին, որի մէջ հաշւի են առնված Եապօնիայի արդարացի պահանջները:

Մօտօնօն, արտայայտելով ջերմ համակրանք բոլոր դաշնակիցներին, ընդգծեց անգլօ-եապօնական դաշնակցութեան անյողդողդ կայունութիւնը և ռուս-եապօնական բարեկամութեան անկեղծութիւնը:

Չինաստանի նկատմամբ Մօտօնօն ասաց, թէ Եապօնիան չը պէտք է խառնվի չինական ներքին գործերին, այլ աշխատելու է նպաստել Չինաստանում տիրող անկարգութիւնների վերականգնմանը, որպէսզի Չինաստանը կարող լինի անկախութիւն և տերիտօրիալ անձեռնմխելիութիւն պահպանել:

ՏՕԿԻՕ.—Պարլամենտի նիստում հերթական առաջարկութիւն եղաւ անվստահութիւն յայտնել կաբինէտին: Անվստահութիւնը քուէարկութեան րօպէին պալատի նախագահը կարդաց պրեմիէր մինիստրի յանձնած հրամանը պարլամենտն արձակելու մասին:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Զինւորական մինիստրութիւնը կարգադրել է ժամանակամիջոց տալ մինչև 1917 թ. յունիսի 1-ը 2-րդ կարգի այն երկրապահ երիտասարդներին, որոնք ուսանում են բժշկական ֆակուլտէտների 4-րդ դասընթացքներում' իբրև ազատ ունկնդիրներ, փոխադրվելով արտասահմանեան ֆակուլտէտներից:

ՊԱՐԻԶ.—Յունաց կառավարութիւնը պաշտօնական նամակով համաձայնութեան պետութիւններից ներողութիւն խնդրեց նոյեմբերի 18-ի ցաւալի դէպքերի համար:

Պատգամաւորների պալատը 289 ձայնով, ընդդէմ 187-ի, որոշեց դռնփակ նիստում քննել Յունաստանի դէպքերը:

ՕԴԵՍՍԱ.—Ռումինական սենատը հա եղած դէպքում շինութիւն է որոնելու Օդեսսայում:

ԿԻԵՎ.—Եկաւ ռումինական բակտերիօլօգիական ինստիտուտը և տեղաւորվեց համալսարանի շինութեան մէջ:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բուդապեշտից հաղորդում են, որ ունգարական պատգամաւորների պալատի նիստում Տիսսան Վիլսօնի յայտարարութեան առիթով ասաց, թէ նա կարող է ողջունել հաշտութեան ամեն մի ձգտում: Մենք պատրաստ ենք,—ասաց նա,—մտքերի փոխանակութիւն կատարել Միացեալ Պետութիւնների հետ հաշտութեան բանակցութիւնների առիթով, բայց մտքերի այդ փոխանակութիւնը պէտք է լինի մեր դաշնակիցների համաձայնութեամբ: Ապա Տիսսան ասաց, թէ ժողովուրդների ազատ զարգացման սկզբունքը նա ողջունում է և այդ սկզբունքը Եւրոպայի հարաւ-արևելեան մասը կարող է իրագործել միայն Աւստրօ-Ունգարիայի գոյութեամբ:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

12—13 յունվարի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Բարձրագոյն հրամանով երկրագործութեան մինիստրութեան կառավարիչ սենատոր հոֆմէյստէր Րիտտիխը նշանակվից երկրագործութեան մինիստր:

Յունվարի 12-ին, Մեծ Իշխանուհի Տատեանա Նիկոլայեվնայի անուանակոչութեան օրը, Ռուսաստանի զանազան քաղաքներից ստացվել են բազմաթիւ հեռագրեր, թէ այդ հանդիսաւոր օրը տօնվել է Մեծ Իշխանուհու անուան տեղական կոմիտէների և ազգային փախստականախնամ կազմակերպութիւնների մէջ: Տաճարներում, կաթոլիկների աղօթատներում և հրէաների սինագօգներում աստուածապաշտութիւնից յետոյ, կայացել են տեղական կոմիտէների հանդիսաւոր նիստերը, ուր կարդացվել են հաշիւներ-կոմիտէների գործունէութեան մասին, որոնց միջոցով բացվել են դպրոցներ, որբանոցներ, արհեստանոցներ և այլ հաստատութիւններ՝ բոլոր ազգութիւնների համար: Կատարվել են մաղթանքներ, խնամվող փախստականներին տրված է տօնական կերակուր, բաժանված է շաքար, իսկ երեխաներին ընծաներ: Թատրոններում տրվել են ցերեկվայ ներկայացումներ փախստական երեխաների համար:

Բուլղարական գահաժառանգ պրինցը այցելեց ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր III և Ալէքսանդր II Կայսրների դամբարանները և դրեց նրանց վրա թարմ ծաղիկներից պսակներ՝ փաթաթված բուլղարական ազգային ժապաւէններով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

— o —

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻ ՄԻՋԱԴԷՊ

Նորաշէնի Մարիամեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան և ուսուցչական մարմնի միջև ծագած միջադէպը արժանի է ուշադրութեան և անհրաժեշտ է, որ թեմական իշխանութիւնը անյապաղ միջոցներ գործ դնէ վերջ տալու այդ տխուր երևոյթին:

Այդ առիթով մենք կը կամենայինք մեր կարծիքը յայտնել:

Վերջին տասնեակ տարիներից ի վեր անջրպետը և բարոյական կապը մեր դպրոցների հոգաբարձութեանց և ուսուցչական մարմինների միջև չափազանց լայնացել և թուլացել է: Մի կողմից ուսուցիչները նայում են հոգաբարձութեան վրա՝ իբրև խօզէյինի վրա, միւս կողմից հոգաբարձուները նայում են ուսուցիչների վրա՝ իբրև վարձկանների. գործադրվում է կապիտալի և աշխատանքի տեսակէտը: Եւ սակայն դա վերին աստիճանի սխալ և անարդար տեսակէտ է: Հոգաբարձութիւնը, ընտրված լինելով ժողովրդից, ներկայանում է իբրև ժողովրդի ներկայացուցիչ. նա ոչ խօզէյին է, ոչ վարձակալ: Ուսուցիչները՝ ժողովրդի ընտրեալների ձեռքով, հետևաբար ժողովրդի կողմից՝ կոչվածներ են ծառայելու կրթութեան գործին: Երկու մարմինները—հոգաբարձութիւն և ուսուցչութիւն—միևնոյն մեծ և վեհ գործի՝ դպրոցի սպասաւորները և մշակներն են, այն տարբերութեամբ, որ մինը՝ վարում է գործի տնտեսական մասը, միւսը՝ ուսումնական մասը: Նրանք հրամայողներ և ստորադասեալներ չեն. նրանք տէրեր և բանուորներ չեն, այլ հաւասար իրաւունքներով՝ գործողներ, ընկերներ: Եթէ այսպիսի բարոյական տեսակէտ և հայեացք չը լինի այդ երկու մարմինների փոխադարձ յարաբերութիւնների և իրաւունքների ու պարտաւորութիւնների վրա, ապա մեռած է մեր դպրոցական գործը:

Մարիամեան դպրոցի ուսուցիչները հարց են բարձրացնում՝ աւելացնել ռոճիկը. դա արդար և բնական պահանջ է, ի նկատի ունենալով ներկայ ժամանակի ապրուստի սոսկալի թանգութիւնը: Ի՞նչ պէտք է անէր հոգաբարձութիւնը. նա, եթէ միջոցներ ունէր, պէտք է գոհացումն տար այդ պահանջին, առաւել կամ նուազ չափով. իսկ եթէ դպրոցի նիւթական միջոցները թոյլ չեն տալիս այդ անել, պէտք է դիմէր ծխական ժողովին, թեմակալ առաջնորդին, Էջմիածնին և խնդրէր հայթայթել միջոցներ:

Ի պատիւ նրա, պէտք է ասել, որ նա, զգալով ուսուցիչների կարիքը, ինքնաբերաբար որոշել է յաւելացնել 1500 ր. նպաստ. բայց նա գործել է այն սխալը, որ, փոխանակ ծխական ժողով գումարելու, հասկացնելու ուսուցիչներին, որ դպրոցը նիւթական ոչ մի հնարաւորութիւն չունի 1500 ր. աւել նպաստ կամ յաւելումն անել, որոշել է մայիսի վերջին արձակված համարել ուսուցչական խումբը: Դա աւելորդ և վաղաժամ քայլ էր, որովհետև եթէ հոգաբարձութիւնը միջոցներ չունենալու պատճառով է այդ անում, նա կարող էր այդ վերջին քայլը անել մայիսին: Երբ բոլոր միջոցները սպառված կը լինէին և ուրիշ ելք չէր մնայ, քան մերժել ուսուցիչների պահանջը:

Ուրեմն հոգաբարձութեան կողմից սխալ է եղել որոշումը թէ ուսուցիչները արձակվելու են մայիսի վերջին:

Սակայն ոչ նուազ սխալ է եղել և ուսուցիչների բռնած քայլը՝ դադարեցնել դասատուութիւնը կամ, որ միևնոյնն է, դասադուլ անել: Երբ որևէ մի գործարանի, առևտրական կամ արդիւնաբերական հաստատութեան մէջ բանուորները, աշխատողները գործադուլ են անում, դրանից տուժում է գործարանատէրը, մասնաւոր շահը: Բայց դպրոցը ոչ գործարան է, ոչ առևտրական հիմնարկութիւն. գործադուլը վնասում է այստեղ ոչ թէ հոգաբարձուներին, որոնք դպրոցի տէրը չեն, այլ խեղճ աշակերտներին, որոնք ոչինչով մեղաւոր չեն, և ժողովրդին, որին և է պատկանում դպրոցը: Ուսուցիչները կարող էին բողոքել հոգաբարձութեան որոշման դէմ թեմական իշխանութեան, եթէ սա ևս ուշադրութիւն չը դարձնէր՝ կաթողիկոսին. վերջապէս, նրանք կարող էին դիմել դպրոցի բուն տէրերին—ծխական ժողովին, այլ ոչ դասադուլ անել:

Այժմ մնում է, որ առաջնորդը կարգադրէ, որ ուսուցիչներն անմիջապէս վերսկսեն իրանց պարապմունքները, և աշխատէ խաղաղ ժողովի մէջ վերացնել թիւրիմացութիւններն ու վերսկսել դպրոցի խաղաղ կեանքը: Վերջապէս պէտք է գումարել անմիջապէս ծխական ժողով և ծխականների օգնութիւնը խնդրել՝ ուսուցիչների արդար պահանջին գոհացումն տալու:

Հ. Ա.

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

III

Մեր հասարակական իրականութեան մէջ կայ միայն մի հատիկ ընկերութիւն—Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը—որը իր աղքատիկ միջոցներով և համեստ ույժերով հազիւ կարողանում էր խաղաղութեան ժամանակ սահմանափակ գործունէութեան նշաններ ցոյց տալ հայկական գաւառներում: Նա չունէր (և անկարող էր ունենալ) ոչ մի պատրաստութիւն պատերազմական կատաստրոֆի հարուածներին դէմ թոյլ ույժերով դիմաւորելու համար գիւղատնտեսական գործունէութեան բնագաւառում: Պատերազմը, իբրև մի արտաքոյ կարգի երևոյթ,—իբրև քայքայիչներից ամենաքայքայիչը տնտեսական կեանքի ու գործունէութեան նորմալ ընթացքի դէմ,—բնականաբար անհրաժեշտօրէն պահանջում էր հասարակական գործօն ույժերի և օժանդակ միջոցների արտաքոյ կարգի լարուածութիւն:

Ժողովրդի ամենաթոյլ խաւը, որ, ինչպէս նկատեցինք յօդուածիս առաջին մասում, ամենամեծ չափերով պիտի տուժէր պատերազմի պատճառած տնտեսական քայքայումներից, աշխատաւոր գիւղացիութիւնն էր: Հասարակական գիտակցութիւնը պահանջում էր, որ ոչ միայն գոյութիւն ունեցող հաւաքական մարմինները (ընկերութիւններ ու կոմիտէներ), այլ և պատերազմի ընթացքում նոր հիմնվողները գործադրէին իրանց կենտրոնների և ճիւղերի գործունէութիւնը և առաջին հերթին կազմակերպէին գիւղացիութեան՝ այդ ամենից շատ տուժող դասի՝ օգնութեան գործը:

Բայց աւա՜ղ. հասարակական գիտակցութիւնը և ողջախոհութիւնը հայերին չէ տրված: Ոչ միայն անտես է առնվում գիւղացիութեան հրամայական կարիքը, այլ և մոռացվում է առ հասարակ «սահմանից ասդին» եղած բոլոր ցաւերն ու հոգսերը: Ոչ միայն եղած հասարակական մարմինների ու գումարները, այլ և նոր հիմնվողներն ու հանգանակութիւնները մազաչափ օգնութեան չեն հասնում աշխատաւոր գիւղացիութեան պարենաւորումը կազմակերպելու և քայքայված տնտեսութեան օժանդակ նեցուկ հանդիսանալու համար: Ամենից զաւեշտականն այն է, որ նոյն իսկ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը՝ հիմնուած նորաստեղծ մենաշնորհ արբեցուցիչ ներշնչումներից՝ մոռացել էր իր գոյութեան խնդիրը, իր գործունէութեան միսիան և ույժերի ու միջոցների արտայայտման ու բաշխման ոլորտը ուղղել էր «սահմանից անդին»:

Հասարակական գիտակցութեան և լրջմտութեան փոխարէն հայերին տրված է քաղաքական անսպառ ֆանտազիա և վերամբարձ իլլիւզիաներով ինքնագոհունակութիւն ստանալու երեխայական միամտութիւն: Հասարակական գործունէութեան ֆիրմայի տակ ասպարէզներ մենավաճառած, փափուկ բարձեր և տաքուկ դիրքեր գրաւած «գործիչները» միլիոններ գանձեցին հասարակական գումարներից և արկածախնդրական քաղաքականութեան անունով, առանց մի բոպէ մտածելու թէ ով պիտի հոգայ թիկունքում մնացած և հետզհետէ քայքայվող շինականի մասին: Հայ գիւղացուց «յաւելեալ արիւն» պահանջող խելացնոր պատրիոտները պարտականութիւն չը զգացին յաւելեալ կոպէկներով օգնութեան հասնելու նրա մեծ ճգնաժամի վայրկեանին: Եւ այն ազգային ջոջերը, որոնք օդից քաղած մեծ ու խաբուսիկ յոյսերին ապաւինած՝ ընդադատ մանուկի հաւատով լեցուն՝ ծայրերից կենտրոն էին աճապարում «ազգային ժողովներում» ջուր ծեծելու համար, մի բոպէ հոգս չը տուին իրանց, թէ «ազգովին խենթացումը»՝ «սահմանից անդին» իդէալի համար՝ կարող է ազգովին տագնապալի հետեւանքներն ունենալ ոչ միայն «սահմանից անդին», այլ և «սահմանից ասդին»:

Այն հայ կրեսոսները, որոնք կենսապէս, դասակարգայնօրէն շահագրգռված են առողջ գիւղացիութեան փաստի մէջ, որպէս մի առողջ ու աշխատաւոր-ընդունակ բանուորութիւն ստանան նրա արտադրութիւնից, մատը մատին չը զարկին տնտեսական անտանելի ճգնաժամի շրջանում՝ օգնութեան ձեռք կարկառելու գիւղացիութեան և գիւղատնտեսութեան համար:

Այս անգամ ևս՝ ունևորների և չունևորների գրպաններից հաւաքած գումարները անարդիւնաբէր տնօրինեցին նրանք, որոնք վաղուց են վարժվել այդ արհեստի մէջ:

Բ. Իշխանեան

(Վերջ միւս անգամ)

ՄԻՋԱԴԷՊ

Ծննդի առաջին օրը, միտրօպօլիտ Պիտիրիմը, հակառակ սինոդի կարգադրութեան, յաղթութեան մասին մաղթանք կատարելու փոխարէն, կատարել է գոհաբանական մաղթանք՝ 1812 թւին ֆրանսիացիներին Ռուսաստանից արտաքսելու մասին: Այս առիթով եղած առաջարկին միտրօպօլիտը բացատրութիւն է տուել, որ ինքը իրան պարտաւորված չէ համարում մի մաղթանքը փոխարինել միւսով, որովհետև սինոդի կարգադրութիւնը ունի մասնաւոր նշանակութիւն և վերաբերել է միայն 1915 թւին: Մինչդեռ սինոդը 1916 թւին իր որոշումը չի կրկնել: Այս ցուցմունքի պատճառով, հարցը համարվում է սպառած է և սինոդում չի քննվելու: Այս ոգով կազմվելու է մի նամակ սինոդի աւագ պրօկուրօր Մ. Պ. Ռայևի անունից Պետրօգրադի ֆրանսիական դեսպանին ուղարկելու: Ենթադրվում է, որ այս բացատրութեամբ էլ վերջ կը դրվի ծագած միջադէպին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Որոշված է Կովկասի Գիւղատնտեսական Ընկ. կից հիմնել անասնաբուժական և կաթնատնտեսական միամսեայ դասընթացքներ: Դասընթացները կը բացվեն յունվարի 20 ին կամ փետրվարի 1-ին:

◆ Փետրվարի 11 ին տեղի կունենայ երգ.-հաւատարմատարների խորհրդի նիստը, որտեղ ընտրվելու է նախագահ և փոխ-նախագահ:

◆ Բորչալուի գաւառի մի խումբ բանջարագործներ առաջարկել են քաղ. վարչութեանը՝ ամսական 1000 սայլ ամեն տեսակ բանջարեղէն մատակարարել քաղաքին սակագնից 20°/₀ ով պակաս գնով: Իրանց խոստումը կատարելու համար բանջարագործները ներկայացրել են 1000 րուբլի գրաւական:

◆ Քաղաքային վարչութիւնը դումա է մտցնում մի զեկուցում այն մասին, որ Սիօնի փողոցը Հավլաբարի կամուրջին միացնող «Վանքի բաղը» ընդարձակվի ազատ երթևեկութեան համար:

◆ Փոխարքայի խորհուրդը որոշեց Պրիվօկզալնի արուարձանը միացնել քաղաքին, որ մինչև այժմ կտրված էր համարվում քաղաքից:

◆ Թիֆլիսում վախճանվեց ժուռնալիստ Ն. Ն. Մակարօվ: Հանգուցեալը ծառայում էր կովկասեան պետական գոյքերի վարչութեան մէջ և երկար ժամանակ, 20 տարուց ի վեր, աշխատակցում էր «Кавказъ» լրագրին, իբրև թատրոնական քննադատ: Նա մեռաւ 54 տարեկան հասակում:

◆ Կանանց բարձր դասընթացներում զբաղմունքները կը սկսվեն յունվարի 16 ին, երկուշաբթի օրը:

◆ Պատերազմից վնասվածներին օգնող լեհական ընկերութիւնը յունվարի 23 ին կազմում է տոմսերով հանգանակութիւն յօգուտ երկրից արտաքսվածների որբերի:

◆ Կուրօրտային համագումարի համար գիւղատնտեսական համաժողովի կողմից ներկայացուցիչ ընտրվեց Վ. Ի. Ռցխիլաձէն:

◆ Վերջին օրերս Թիֆլիս են եկել իտալացի փախստականներ Ռումինիայից: Նրանք ամենքն էլ մասնագէտ արհեստաւորներ են: Իտալական ընդհանուր հիւպատոսը միջոցներ է ձեռք առել նրանց տեղաւորելու պետական պաշտպանութեան համար աշխատող գործարանների մէջ:

◆ Յունվարի 13-ին Փիրալովի խանութից (Շտաբնայա փող. վրա, Գուտտենբերգ գրավաճառանոցի տուն) կողպէքները կոտրելով գողացել են բաւականաչափ ապրանք: Քննութիւն է կատարվում:

◆ Էջմիածնի «Արարատ» ամսագրի վերջին համարում տպված է, որ նոյեմբեր ամսի ընթացքում յօգուտ փախստականների ստացված է 52,520 ր. 13 կ., իսկ ընդամենը մինչև այդ օր ստացված է 3.604,451 րուբլի:

◆ Երէկվայ տօնի պատճառով, վրաց թերթերը այսօր լոյս չը տեսան:

◆ Հանգուցեալ Թորոս Համբարձումեան Իլլեանցի յատուկ ցանկութեամբ՝ նրա որդի Գէորգը արաւ հետևեալ նուիրատուութիւնները իր հանգուցեալ հօր յիշատակին: 1) Խարբերդից վերադարձած կարօտեալներին 1500 ր., 2) Թիֆլիսի հայ քահանաների միջոցով վիրահօս վայրերում պահվող դպրոցների օգտին 500 ր., 3) Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան 500 ր., 4) Ալէքսանդրօպօլի Հայոց Բարեգործական Ընկ. 300 ր., 5) Կաթուղիկէ եկեղեցու ծխակ. դպրոցին 300 ր., 6) Էջմիածնեցոց Մարիամեան օր. ծխական դպրոցին 200 ր., 7) Հայ Օրիորդաց Կոմիտէի որբանոցին 200 ր., 8) ռուսաց կարմիր խաչին 200 ր., 9) «Մեղու» ընկերութեան 200 ր., 10) Հայ Քահանայից Ապահով. Գանձարանի վարչութեան 200 ր.:

◆ Հայ Դրամատիկ Խմբակցութեան հերթական ներկայացումը յունվարի 16 ին Ժողովրդական Տանը նշանակված էր Ա. Աթանասեանի (Սալ-Մանի) «Ջրվէժ» պիէսը բարեփոխված և վերախմբագրված ձևով: Մի քանի հանգամանքների շնորհիւ, պիէսը առ այժմ յետաձգվում է և երկուշաբթի, յունվարի 16-ին նրա փոխարէն ներկայացվելու է «Հին Աստուածները»:

◆ Ասորի կաթոլիկ Սիմոն Դուրգով գտնվում է նիւթական խիստ ծանր դրութեան մէջ և կարօտ է հասարակական օգնութեան գոնէ ապրուստի պարէն ունենալու համար: Դրամական օգնութիւն կարելի է ուղարկել «Մշակի» հասցէով:

◆ Ստացանք «Տարազի» դեկտեմբերի № 12 ը: Հանդէսը ամբողջապէս նուիրված է նորոգ հանգուցեալ Ալ. Երեւեանին և Ս. Թաղայեանին: Կան յատուկ յօդուածներ նրանց նուիրված, զետեղված են նաև նրանց պատկերները մի քանի ձևով. կան և ուրիշ պատկերներ, ինչպէս Փ. Վարդանեանի, Յակոբ Պարոնեանի, պրօֆ. Նիկ. Բարսեղ շի և Յովհ. Պատկանեանի (Գամառ-Քաթիպայի որդու): Հանդէսը կազմված է շքեղ և ճաշակով:

◆ Քաղ. Միութեան կովկ. բաժանմունքը Տրապիզոնի շրջանում բացել է 4 դ փախստականական լազարէթը 100 մահճակալով: Այս օրերս բացվելու է և 5-դ լազարէթ նոյնքան մահճակալով:

ԿՈՎԿԱՍ

◆ Քաղ. Միութեան կովկասեան բաժանմունքի ստացած տեղեկութիւնների համաձայն, Գանձակի լազարէթն են այցելել պրինց Օլդենբուրգսկիի ներկայացուցիչ գեն. Բերսօվ և պրօֆ. Ուսպենսկի և լազարէթը գտել են օրինակելի դրութեան մէջ: Լազարէթում վիրաւորներին և հիւանդներին ցոյց է տրվում սրտագին վերաբերմունք:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Рѣчь»-ը հաղորդում է թէ կարգադրված է, որպէսզի քաղաքների և զեմստվային միութիւնների ծառայութեան մէջ գտնվող բոլոր հրէադաւանները, բացի ֆէլդշերներից և բժիշկներից, անյապաղ փոխանակվեն այլ դաւանապատկան անձերով:

◆ «Р. Сл.»-ն լսել է, թէ, համաձայն Բարձրագոյն ցուցմունքի, իշխ. Գոլիցինը պարզելու է կառավարութեան քաղաքականութիւնը Պետական Դումայի առաջիկայ նիստում: Կառավարութեան ծրագիրը լինելու է բացառապէս գործնական և չէ շօշափելու որևէ քաղաքական բարենորոգման խնդիր, որովհետև մինիստրների խորհրդի նախագահը անձնապէս այն կարծիքի է, թէ բարենորոգումների մասին խօսք կարող է լինել միմիայն պատերազմից յետոյ:

◆ Ներքին գործերի մինիստր Պրոտոպօպօվը, մայրաքաղաքների լրագիրների ասելով, խնդրել է 51 միլիօն րուբլի Ռուսաստանի բոլոր նահանգներում ոստիկանութիւնը ուժեղացնելու համար:

◆ «Р. Сл.»-ի ասելով, Տրեպօվը խնդրեց մինիստրների խորհրդից հնարաւորութիւն տալ իրան աշխատել պետական ինքնապաշտպանութեան գործերի մէջ: Մինիստրների խորհուրդը սիրայօժար ընդունել է մինիստրների խորհրդի նախկին նախագահի առաջարկութիւնը:

◆ Պետական Դումայի անդամ Չխենկելիի առողջական դրութիւնը շարունակում է մնալ կրիտիկական: Բժշկական քննութիւնը պարզել է, որ ձախ թոքը ամբողջովին բորբոքված է: Հիւանդը երբեմն ուշքի է գալիս: Չխենկելիին մօտիկ մարդիկ հեռագիր են ուղարկել պատգամաւորի հարազատներին: Վերջին հեռագրի համաձայն, պատգամաւորի դրութիւնը լաւանում է:

◆ Եկատերինոսլաւի նահանգապետը փակել է ուկրայնական «Պրօսվիտա» ընկերութիւնը:

◆ Պետրօգրադից արտաքսված է [illegible] իշխան Մ. Մ. Անդրոնիկով:

◆ Լուրերի համաձայն՝ ծովային մինիստր Գրիգորօվիչը թողնում է իր պաշտօնը:

◆ «У. Р.»-ի մէջ տպված են մանրամասնութիւններ Մոսկվայում տեղի ունեցած քաղաքային և հասարակական գործիչների խորհրդակցութեան մասին: Մակլակովի զեկուցումից յետոյ, խորհրդակցութիւնը եկաւ այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է սերտ միութիւն հաստատել Պետական Դումայի և հասարակական ույժերի միջև բլոկի միջոցով: Մի քանի օր յետոյ Չելնօկովի, Միլիւկովի, իշխ. Լվովի և այլոց մասնակցութեամբ կայացաւ նոր խորհրդակցութիւն: Միլիւկովը քննարկեց մի քանի հասարակական գործիչների, որոնց ազգային [illegible] լայն խաւերը կարող են տեսնել ապագայ ղեկավարներ. ի միջի այլոց խօսվեց Րօձեանկոյի և Գուչկովի մասին: Միլիւկովին յանձնարարվեց բանակցել բլոկի հետ: Առանձին բանակցութիւններ լինելու են Րօձեանկոյի հետ: Բաց մնաց ձախակողմեանների հետ համաձայնութիւն կապելու հարցը: Տակտիկայի նկատառմամբ որոշվեց գործադրել բացառապէս պարլամենտական կռուի տակտիկան:

◆ Մամուլը շարունակում է քննել Բարձրագոյն հրովարտակը յանուն իշխ. Գոլիցինի. «Н. Вр.»-ն ասում է. «Այսուհետև էլ չի լինի գործադիր իշխանութեան և օրէնսդրական պալատների յամառ պայքարի ողբալի դրութիւնը: Այսուհետև էլ չեն նեղվի ազգերի ջոջերը, առանձնապէս յանձին զեմստվօների, որոնք ճանաչված են անփոխարինելի նեցուկ կառավարութեան համար»:

◆ Յայտնի Մանասեվիչի գործը վերջնականապէս նշանակված է փետրվարի 13 ին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Երևան, 13 յունվարի

Դրամատիկական Ընկ. վարչութեան բացատրութիւնը, թէ ինչու մենք չըկանք խմբի մէջ, քննադատութեան չի դիմանում: Ցաւում ենք, որ ընդհանուր ժողովը երկարաձգեցին մինչև մեր բացակայութիւնը: Առաջարկում ենք Ընկ.-եան գիտակից անդամներին միանալ մեզ և պահանջել արտակարգ ընդհանուր ժողով մինչև փետրվարի 2-ը:

Աբէլեան, Մայսուրեան, Ալիխանեան, Յարութիւնեան և ուրիշներ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունվարի 12-ին, Արքունական թատրոնում, Տ[illegible] կազմված ուսանողական տարեդարձի օրը, յօգուտ Ուսանողներին Օգնող Կովկասեան Ընկերութեան դրվեց «Մանոն» օպէրան, երաժշտութիւն Մասսընէի: Այդ օպէրայի մէջ գլխաւոր դերակատարներ են Մանօն Լէսկօ, որի դերը երգում էր տ. Վոլ Լէվ ցկայա, և ասպետ Դը-Գրիէ, որի դերը երգում էր արտիստ Զալևսկին: Երկուսն էլ այդ երեկոյեան նոր այցելան բեմն էին կազմում և՝ պէտք է ասել՝ անագին աջողութիւն ունեցան:

Թատրոնը լի էր հասարակութեամբ. ուսանողները վաճառում էին ծրագիրներ ու ծաղիկներ և երեկոյթի արդիւնքը շատ գոհացուցիչ եղաւ:

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Տիկ. Սիրանոյշի բենէֆիսը

Թէև մի քիչ ուշ, բայց չենք կարող չը յիշատակել յունվարի 9-ին կայացած ներկայացումը: Այդ օրը հայ դերասանական խումբը տիկ. Սիրանոյշի պատուախաղին, դրել էր Համսունի «Կեանքի ճիրաններում» պիէսը: Այդ ներկայացումը պէտք է համարել ամենաաջողը Դրամատիկ Ընկերութեան ներկայ սեզոնի բոլոր ներկայացումներից: Դրա պատճառը կայանում է թէ իրա, պիէսի մէջ, որ շատ բնական է, և տալիս է լայն ծաւալ արտիստի ստեղծագործութեան համար, և թէ այն առանձին խնամքի մէջ, որով այս անգամ դրվեց ներկայացումը: Այդ երեկոյ ամենամեծ աջողութեան բաժինն ընկաւ, ի հարկէ, բենեֆիցիանտ տաղանդաւոր տ. Սիրանոյշին, որին մեր մամուլը վաղուց գնահատել է շատ արժանօրէն: Տիկին Սիրանոյշը մինն է մեր մայրենի բեմի այն գործիչներից, որոնց անունը երբէք չի անհետանայ հայկական թատրոնի պատմութեան էջերից: Հասարակութիւնը ցոյց տուեց նրան՝ բեմ երևալիս [illegible] օվացիաներ: Իր դերը արտիստուհին տարաւ մեծ հմտութեամբ, պատկերացնելով մեր առջև ծերացող և երիտասարդութեան հետ պայքարող կնոջ ամբողջական և վառ նկարագիրը: Հասարակութիւնը ոգևորված ցոյցեր արեց. եղան և նուէրներ:

Ինչ վերաբերում է միւս դերակատարներին, պէտք է ասել, որ անսամբլն այս անգամ շատ աջող էր. մի շատ դժուարագիւտ երևոյթ: Պէտք է աջող համարել և բեմադրութիւնը: Թատրոնը լի էր: Պրօգրամների վրա տպված էր պիէսի բովանդա-

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

ԱՐՇԱԼՈՅՍ

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿ. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ամսական [illegible] գրքոյկ:
Տարեկան լոյս է տեսնելու վեց գրքոյկ: Հրատարակվելու է երիտասարդ գրողների մասնակցութեամբ: Թերթի հրատարակութիւնը բոլորովին ապահոված է:

Առաջին գրքոյկի համար նիւթեր ուղարկել մինչև յունվարի վերջը՝ հետևեալ հասցէով. Тифлисъ
Черкезовская ул., № 93, Ашоту Мелкумянцу.
2—1

կութիւնը—դա ինքն ըստ ինքեան լաւ միտք է, մանաւանդ եթէ ի նկատի ունենալ այն խայտառակ հասարակութիւնը, որ այս սեզօնին յաճախում է թատրոնը։ Ցանկալի է միայն, որ տպված բովանդակութիւնը ներկայացնէր որեւէ գրական արժէք։

ՄԱՄՈՒԼ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼ

«Русск. Вѣд.» թերթը չափազանց յոռետես է ներկայ տարվայ նկատմամբ։

Առաջնորդող յօդուածում կարդում ենք.

Գալիքի բնական անորոշութիւնը աւելի եւ անթափանցելի է դառնում շնորհիւ այն սոսկալի հեղձուցիչ գազերի, որ տարածում են հասարակականութեան թշնամիները։ Թւում է թէ «անսահման կարելիութիւնների երկրում» հնարաւոր են նորանոր անակնկալներ, և ոչ մի փուշակութիւն կարող չէ գլուխ հանել այս բազմաթիւ իքս-երից, որոնք աւելի ու աւելի դժուարացնում են առանց այն էլ բարդ ալգեբրայական հաւասարութեան լուծումը։

Պատերազմը դեռ հեռու է ցանկալի կէտի հասցված լինելուց։ Մեզանից խըլված նահանգները դեռ եւս գտնվում են թշնամու ձեռքում, դեռ եւս չէ յաղթահարված նրա դիմադրողական ուժը, ինչպէս և չէ կասեցված (այդ ցոյց տուին ռումինական ռազմաբեմի գործողութիւնները) նրա առաջ խաղալու հնարաւորութիւնը։ Որպէսզի կարողանանք գլուխ հանել այս դժուարութիւններից, հարկաւոր է,—ինչպէս ամենուրեք կրկնվում է,—հասարակական բոլոր ուժերի լարումն. մեր զոհաբերութիւնները պիտի քաւենք նոր զոհերով, և այս նոր ճիգերը պիտի ներշնչված լինեն հաւատացեալի էնտուզիազմով և համոզմունքով առ այն, որ մենք ամեն ինչ անում ենք այնպէս, ինչպէս որ հարկաւոր է, որ տարակուսանքի և տատանումների համար տեղ չը կայ։ Սկեպտիցիզմը կարող է բոլոր զոհերը ապարդիւն դարձնել. անվստահութիւնը խախտում է ամենամտածված գործերը և ուժասպառ է անում հզօր ձեռնարկութիւնները։

Եւ երբ ներկայ մոմենտի այս պահանջները կողք-կողքի ես դնում այն բոլորի հետ, ինչ որ կատարվում է Ռուսաստանի ներսում, նոյնիսկ ամենալաւատես մարդիկ սկսում են մռայլվել, հորիզոնը ծածկվում է մութ ամպերով։ Հասարակական էնտուզիազմը, որ այնքան անհրաժեշտ է յաղթութիւնը տանելու համար, արհեստական կերպով ճնշվում է, հաւատը խախտվում։ Հասարակութեան գլխին նորանոր էկսպերիմենտներ են կատարվում, այն հասարակութեան, որը կրում է հսկայական զոհաբերութիւնների լուծը, որ տալիս է հայրենիքին իր անդորրութիւնը, իր արիւնը, իր յոյսերը, և այդ էկսպերիմենտներն ուժասպառ են անում նրա նախաձեռնութեան ոգին, անօգուտ են դարձնում նրա հսկայական զոհերը։

Սրանից, թերթի վկայութեամբ, ստեղծվում է մի այնպիսի դրութիւն, որ հասարակութիւնը լքված է, դարձել է իներտ և սպասում է մի հրաշքի, որ պիտի գայ և կարգաւորէ կեանքը, իսկ եթէ չը գայ, ապա ուրեմն ոչ մի ելք չը կայ, և մենք կանգնած ենք կատարեալ անյայտութեան առաջ։ Սակայն վերջ ի վերջոյ թերթը համոզված է, որ այդ ելքը կայ։ Եւ այդ ելքն է հասարակական ուժերի պայքարը՝ մութ ուժերի դէմ և առաջինի յաղթանակը։

Մենք պէտք է յաղթենք արտաքին թըշնամուն, և դրա համար հասարակութիւնն էլ պէտք է յաղթանակ ձեռք բերէ ներքին կռւի մէջ, որը նա վաղուց ի վեր մղում է և որը առաջացրել է դեռ եւս երբէք այսպիսի սուր կերպարանք չը ստացած ներքին կրիզիսը։ Այս կռւում տեղ չը կայ տատանումների և տարտամութեան համար։ Գիտակցված ճիգեր յանուն պարզ կերպով դրված նպատակների. ահա միակ հնարաւոր հեռանկարները։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ.

Նորաշէնի Ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի ձրի ճաշարանի օգտին ստացվեց №-ից 50 ր., բժ. Գէորգ Թամամշեանից 25 ր., բժ. Գէորգ Մեհրաբեանից 15 ր., բժ. Աղէքսանդր Սարգսեանից 10 ր., Տ. Վարվառէ Խօջախբուխանից 10 ր.։

Ճաշարանի վարչութիւնը յայտնում է խորին շնորհակալութիւն բարեպաշտ նուիրատուներին։

Նախագահ վարչութեան՝
Սարգիս ա. ք. Շիօյեանց

Թիֆլիս, 12 յունվարի

Միութենս Եալթա բնակող երզնկացիներէ և տարբեր քաղաքացի ազգայիններէ շնորհակալութեամբ ստացած է 528 ր. 50 կ.։ Նուիրատուները հետեւեալներն են.

Միքայէլ և Մկրտիչ եղբ. Խաչիկեան 100 ր., Յովհաննէս Յարութիւնեան 30 ր., Արշակ Խաչիկեան, Սարգիս, Անտօն Վարատեան, Սարգիս Կիրակոսեան, Ստեփան Թառեկեան 20 ական ր., Յովհաննէս Սուքիասեան, Գարեգին Մանուկեան, Միսակ Մանուկեան, Կարապետ Մերկուլով Մարտիկեան, Յարութիւն, Անաստաս և Արիլ եղբ. Պետր. Գաբրիէլեաններ, Աւագ Մկրտիչ Օյնօյեան 15-ական ր., Բարսեղ Բիլլանճեան, Ռստամ Մնացականեան, Բարդող Խաչատուր Մէլէթպաշեան, Աւետիս Մանուկ Յովակիմեան, Կիւրեղ Գրիգոր Պատիկեան, Սուքիաս Մարտիրոս Հալաճեան 10-ական ր., Կարապետ Զալլաքեան 7 ր., տիկին Վարդանոյշ Յովհաննէսեան, Զաքար Ղազարեան, Մինաս Շէրիաճեան, Պառնիկ Անտօն Վարատեան, Թովմաս Յակոբ Հալաճեան, Համբարձում Մարտիրոս Հալաճեան, Սրապիօն Ղազար Համբարեան, Արմենակ Ղազար Համբարեան, Աւետիս Սարգիս Նորսիկեան, Արմենակ Աւագ Նորսիկեան, Գալուստ Գրիգոր Պաղտասարեան, Գրիգոր Ստեփան Խաչատուրեան, Սարգիս Յովհաննէս Մանասէյեան, Արշակ Տօնիկ Եղեկեան, Եղիա Քէօռ-Օղլու Ադամ Յովհաննէսեան, Գէորգ Պէրպէրեան, Լեւոն Յովհաննէս Յարութիւնեան, Արմենակ Գաբրիէլ Պետրոսեան, Գրիգոր Զաքրեան, Յարութիւն Անդրէասեան և Եղիա Շահպազեան 5-ական ր., Լեւոն Մուրատեան 4,50 ր., տիկին Սիրվարդ Մանուկեան, Սարգիս Լուսիկեան, Սահակ Խաչատուր Համբարեան, Տիգրան Յովհաննէս Տիւրկէրեան, Արշակ Արզար Տ. Սարգիսեան, Թառօ Մանուկեան, Մարգար Միսակ Սաղաթէլեան, տիկին Աղաւնի Մերկէլով Մարտիկեան 3-ական ր., Բաբկէն Միսակ Մանուկեան, Մարտիրոս Գրիգոր Պատիկեան 2 ական ր., Յակոբ Մնացականեան և Եղիա Սարգիսեան 1-ական ր., գումար 528 ր. 50 կ.։

Ի դիմաց վարչութեան
Նախագահ՝ Ս. Խանճեան
40. 1—1

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Երթեւեկութիւն Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

Բագու № 6 արագ 11 ժ. 13 ր. առ.
» № 8 » լրաց. 3 ժ. 54 ր. ցեր.
» № 4 պօստատար 9 ժ. 28 ր. երեկ.
Բաթում № 3 » 11 ժ. 03 ր. առ.
» № 9 մարդատար 10 ժ. 33 ր. երեկ.
Երեւան և Ջուլֆա № 4 պօստատար 11 ժ. 03 ր. երեկ.
Սարըղամըշ, զինւորական № 316/631 մարդատ. 11 ժ. 43 ր. երեկ.

ԹԻՖԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ Է

Բագուից № 3 պօստատար 10 ժ. 08 ր. առ.
» № 7 արագ լրաց. 4 ժ. 12 ր. ցեր.
» № 5 » 8 ժ. 48 ր. երեկ.
Բաթումից № 10 մարդատ. 9 ժ. 52 ր. առ.
» № 4 պօստատար 8 ժ. 38 ր. երեկ.
Երեւանից և Ջուլֆայից № 3 պօստատար 8 ժ. 10 ր. առ.
Սարըղամըշից, զինւորական № 648/299 մարդատ. 5 ժ. 13 ր. երեկ.

Թիֆլիս—Մցխէթ

Թիֆլիսից Մցխէթ № 61 9 ժ. 12 ր. առ.
№ 63 5 ժ. 4 ր. ցեր.
տօներին 2 ժ. 33 ր. ցեր.
Մցխէթից Թիֆլիս № 62 (տօներին) 11 ժ. 3 ր. առ.
№ 64, 7 ժ. 20 ր. երեկ.

Թաւրիզեան երկաթուղի

Ջուլֆայից Թաւրիզ 7 ժ. առաւ.
Թաւրիզից Ջուլֆա 11 ժ. 30 ր. առ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱԼԱՐԵԱՆ—9 կէսից—[illegible] ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւններ։
Ա. Ն. ԻՍԱՀԱԿԵԱՆ—11—12 ժ. կանանց հիւ. և վիրաբուժական։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ն. ԻՍԱՀԱԿԵԱՆ—6—7 ժ. կանանց հ. և վիրաբուժական.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

!Զգուշացէք կեղծիքներից!
ՊՐՕՎԻԶՕՐ
Г. Ф. Юргенсъ-ի
Բօրնօ-Տիմօլեան
Սապօն
Քրտինքի, պրուածքի, պէպէնների, սպիների, պզուկների և դեղին խալերի դէմ։
ՏՈՒԱԼԵՏԱՅԻՆ-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ։
Վաճառվում է ամենուրեք.
Ոսկէ մէդալ Լօնդոն 1893 թ.
Գլխաւոր պահեստ՝ Г. Ф. Юргенсъ
(կ.) Г. 24—17

ԳՏՆՈՒԱԾ Է

Եւ կը մնայ Միութեանս խնամքին տակ երզնկացի 12 տարեկան Աստուր Սրապեանը (զանթարճի Նազարին տղան)։ Կը խնդրուի Ամերիկա գտնուող իր եղբայրներէն (Արշակ և Ռուբէն Սրապեան) իր մասին կարգադրութիւն մը ընել։ Tiflis Ujnaya Malotchnaya, Sebouh Handjian.
41 2—1

Լոյս տեսաւ Կովկ. Զինւոր. Ջարի վեմագր.
Աշխարհագրական դպրոցական ատլաս
Կազմեց ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ
Դպրոցական ատլաս (հայերէն) տպագրված է երբ գոյնով և պարունակում է տասը քարտէզ (9 տախտ.)— Կիսագնդեր, Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Հիւս. և Հար. Ամերիկա, Աւստրալիա, եւր. Ռուսաստան, Կովկաս և Թիւր-Հայաստան։ Գինն է 1 ր. 25 կ.։ Պահեստը «ՏԻՐ» գրախանութում։
(Հ. Կ.) 1153. 6—4

„ՄՇԱԿԻ“ խմբագրատանը
վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.
1) Ջնուդ Քուսան, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի 1 ր. —
2) Իննսուն երեք, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . . 1 ր. 50 կ.
3) Ուրանիա, աստղագիտ. վէպ Կ. Ֆլամարիօնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . . 1 ր. 50 կ.
4) Տասն եւ երկու պատմուածք, Շահրիարի . . . . . . — 50 կ.
5) Քսան վէպիկներ, Գի դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
6) Սաւառնող ոգին, վէպ. Յ. Սօլօվեանի . . . . . . — 40 կ.
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրայ։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ
(4) 0—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕՐԳԱՆ
„ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ“ XXVI ԳԻՐՔԸ
Բովանդակութիւն.—Վայոց Ձորի հնութիւնները՝ Ե. Լալայեանի, Ս. Գրիգոր Նարեկացի՝ Մանուկ Աբեղեանի, Ազգագրական նիւթեր Եգ՝ իկի մէջ՝ Մ. Խատիկեանի, Մուշ Տարօնի ազգագրութիւնը՝ Ե. Լ., Վասպուրականի հաւատքը՝ Ե. Լ., Ծիսական կարգերը հայոց մէջ ըստ Հ. Սպենսերի՝ Ե. Լ., Մահգոյժ՝ Լէօի, Գրախօսութիւն՝ Լ. Մ. Բ.։ 229 երես, 48 նկար։
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Բացված է բաժանորդագրութիւն XXVI և XXVII գրքերի. բաժ. 3 ր.։ Դիմել. Армянскому Этнографическому О-ву Тифлисъ.
(Հ. Կ.) 43 3—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թւից)
Երկու սեռի անձանց համար
Դասընթացքը 4-ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքով։
Խնդիրքների ընդունելութիւնը երկրորդ սեմեստրի համար վերսկսվեց դեկտեմբերի 15 ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15 ից, 1917 թ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատանը՝ Թիֆլիս, Նիկօլայեւսկայա փողոց, № 22, տելեֆօն № 7—44
(ա. օ.) 1077. 0—15

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Կէրօսինօ-կալիլային լապտեր, նոյնպէս և
Գիւղատնտեսական ամեն տեսակ գործիքներ,
այն է՝ կուլտիվատորներ «Մակ Կորմիկ», երկշարք և միաշարք բամբակացաններ, դիսկային տափաններ, գութաններ և այլն։ Տեղեկանալ ամեն օր՝ առ. ժ. 10-ից մինչև ցեր. ժ. 3-ը, Սօլօլակսկայա փող., № 9։ Հարցնել Յակոբին։
(15, 19, 22) 32 4—2



ՕԳՏՎԵՑԷՔ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹԻՑ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԷՐՋԵԱՆԻ
ՀԻՊՆՕՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
Գործնական հոգեբանութեան
ԿՈՒՐՍԵՐԸ
Այս նոր կուրսերը մասնաւորապէս պատրաստված են այն նպատակով, որ ընթերցողը կարողանայ սովորել Հիպնոտիզմը առանց ուսուցչի, առանց մեծ ծախքերի և առանց միջնորդի սոսկ մտքի ույժով։
Ընթերցողը Հիպնոտիզմին տիրապետելուց յետոյ՝ կարող է բուժել զանազան տեսակ հիւանդութիւններ, որոնք նշանակված են 32-րդ դասում։
Հիպնոտիզմով կարելի է վերացնել վատ սովորութիւններ երեխաների մէջ. գողութիւն, ծուլութիւն, ծխել, մի խօսքով արմատախիլ անել՝ ինչ որ վատ է, ու ներշնչել՝ ինչ որ լաւ է և օգտակար։
Հիպնոտիզմով դուք կարող էք ուղարկել ձեր էնթակային հեռու վայրեր, ուր գտնվում են ձեր սիրելիները և բարեկամները, որ նրանցից տեղեկութիւն բերի ձեզ։
Հիպնոտիզմով դուք կարող էք, բացի գաղտնիքների մէջ թափանցելուց՝ տալ և ապշեցուցիչ և ծիծաղ առաջ բերող սէանսներ (տեսարաններ)։ Հիպնոտիզմով դուք կարող էք իմանալ ով է վերցրել ձեր իրերը, կամ ուր էք կորցրել կամ թաքցրած իրերի տեղը։
Արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետեւեալ հասցէով. СУСАННА ШЕКЕРДЖЯНЪ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ.
(կ.) 1143 20—3

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Յովհաննէս Զաքարեան Տէր-Ստեփանեանցի
Յունվարի 10-ից կը սկսվեն պարապմունքները՝ ցեր. 3—5 և երեկ. 8—10-ը։ Խնդիրների ընդունելութիւնը երկսեռ անձանց համար շարունակվում է։ Նոյն տեղը սովորեցվում է նաև ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ։ 1 Тумановская соб. домъ № 13.
2116 6—11

ՆՈՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՎԵՐՍԿՍՎՈՒՄ Է ԸՆԴՀԱՏՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
Գեղարուեստ
ԳՐԱԿԱՆ, ՄՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ՝ ԹԻՖ. ԼԻՍՈՒՄ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏ պատկերազարդ հանդէսն այսուհետեւ լոյս կը տեսնի կանոնաւորապէս տարեկան երկու անգամ՝ ապրիլ և հոկտեմբ. ամիսներին նախկին դիրքով՝ բայց աւելի ստուար ծաւալով (իւրաքանչիւր գիրքը մօտ 300 էջ մեծադիր) և բազմաթիւ պատկերներով՝ գլխաւորապէս հայրենի աշխարհից։
ԳԵՂԱՐՈՒԵՍՏ պատկերազարդ հանդիսին մասնակցում են մեր գեղեցիկ գրականութեան, պլաստիք արուեստների, թատրոնի և երաժշտութեան համարեա բոլոր լաւագոյն ուժերը։
ԲԱՑՎԱԾ Է 1917 ԹՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ
(Գրախանութներին և գործակալներին 5% զեղչ)
Հրաւիրում ենք հայ գեղարուեստը և գեղեցիկ գրականութիւնը [illegible] թեան ընդառաջ գալ և խմբագրութեանը աջակցել այս դժուարին և բազմածախս գործի մէջ։ Հրաւիրում ենք նաև մեր նախկին բաժանորդներին ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼ ԻՐԱՆՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ (տես «Մշակ» № 284 և «Հորիզոն» № 286 խմբագրութեանս բացատրական նամակը)։ «Գեղարուեստի» նախորդ գրքերն ՍՊԱՌՎԱԾ ԵՆ, սակաւաթիւ օրինակներ կան միայն 4-րդ գրքից, որից և խմբագրութիւնս կարող է մեր հանդէսին դեռ եւս անծանօթ անձերին ուղարկել որպէս նմուշ, ստանալով ճանապ. ծախսով 3 րուբլի։
Թէ բաժանորդագրութեան և թէ պօստային ամեն տեսակ յարաբերութիւնների համար օտար տեղերից դիմել՝ Тифлисъ, редакція «Гехарвестъ» կամ Tiflis, Rédaction «Gégharvest». Թիֆլիսում բաժանորդագրութիւն ընդունվում է Սերգէեվսկայա փողոց № 20 «Հայոց Հրատարակչական Ընկ.» գրասենեակում, ժամը 12—2-ը, ուր և պէտք է դիմեն խմբագրի հետ անձամբ գործ ունեցողները ժամը 1—2-ը։
1155 (կ) 10—2

ՅՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ
ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
երրորդ պրակը, երկրորդ հրատարակութեամբ։ Օրինակների թիւը սահմանափակ է. ցանկացողները կարող են վաղօրօք դիմել հեղինակին (Թիֆլիս, Орловская ул., 8) կամ Թիֆլիսի գրավաճառներին, որտեղ վաճառվում են նաև հեղինակի միւս աշխատութիւնները։
(Հ. Կ.) 34 3—3

Առեւտրի և Արդիւնաբեր. Մինիստրութեան
հսկողութեան ներքոյ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տելեֆօն № 9—76.)
Խնդիրների ընդունելութիւնը դեկտեմբերի 25-ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։
(ա. օ.) 1131 0—15

Առեւտրական Տուն „Յ. Ն. Տէր-Յարութիւնեան եւ Ընկ.“
գրասենեակը
(Երեւանեան հրապարակ, քաղաքային տուն)
Կազմում և ընդունում է գրող մեքենայի վրա տպելու համար ամեն տեսակ պաշտ. թղթեր խնդիրներ, ռեկլամներ, պլակաթներ, լրագր. յայտարար. և այլն։
Ընդունում է բաժանորդագրութիւն մայրաքաղաքների և արտասահմանեան պարբերական հրատարակութիւնների։
Թարգմանում և կազմում է բոլոր եւրոպական լեզուներով նամակներ և ուրիշ թղթեր.
Կարգի է բերում առեւտրական գրքեր և կազմում է ամեն տեսակ հաշւեկշիռներ, ինվենտարներ, հաշիւներ և կատարում է հաշւապահական աշխատանքներ։
Կատարում է ամեն տեսակ առեւտրական յանձնարարութիւններ և
Վաճառում է ակտովի և մուրհակի թղթեր, պօստի և գերբովի մարկաներ։
(Ե. Հ. Կ.) 877. 150—39

Типографія „ЭКОНОМІЯ“, Тифлисъ